ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հուլիսի 16-ի Տեսալսողական մեդիայի մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31-րդ կետով.

31) **Սինթետիկ բովանդակություն՝** ցանկացած տեսակի տեսալսողական, ձայնային, կամ այլ տեղեկատվական նյութ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն ստեղծվել, գեներացվել, ձևափոխվել կամ վերարտադրվել է արհեստական բանականության համակարգերի, ալգորիթմային գեներատիվ տեխնոլոգիաների կամ ավտոմատացված ծրագրային միջոցների կիրառմամբ, ինչպես նաև այն նյութը, որը թվային մշակումների արդյունքում ձևափոխվել է այնպես, որ կարող է անձի մոտ ստեղծել իրականության հետ անհամապատասխան ընկալում դրա ծագման, իսկության կամ ներկայացված անձի խոսքի, պատկերի կամ գործողությունների վերաբերյալ։

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1 հոդվածով?

Հոդված 9.1 Սինթետիկ բովանդակության պարտադիր մակնշումը

1. Տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պարտավոր են ապահովել, որ սինթետիկ բովանդակությունն ունենա հստակ, լսելի կամ

տեսանելի և ընթեռնելի մակնշում, որը պարունակում է «Գեներացված է ԱԲ-ի կողմից» կամ «Ստեղծված է ԱԲ-ի կողմից» նշումը։

2. Մակնշումը պետք է իրականացվի հետևյալ եղանակներով՝

1) Տեսալսողական հաղորդման դեպքում՝ ցուցադրվի տեսանյութի ամբողջ ընթացքում, ինչպես նաև արտացոլվի նկարագրության դաշտում,

2) Լսողական հաղորդման, ինչպես նաև ձայնային բովանդակությամբ այլ նյութերի դեպքում՝ ներառվի երկու անգամ՝ լսողական հաղորդման սկզբում և վերջում, ինչպես նաև նկարագրության դաշտում,

3) պատկերների դեպքում՝ արտացոլվի պատկերի վրա, ինչպես նաև, ներառվի պատկերի նկարագրության դաշտում։

3. Այն դեպքում, երբ հաղորդումն ամբողջությամբ սինթետիկ բովանդակություն չի հանդիսանում, մակնշումը կատարվում է միայն հաղորդման այն հատվածում, որը պարունակում է սինթետիկ բովանդակություն։

4. Մակնշման պարտականությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ բովանդակությունը ֆանտաստիկ, գեղարվեստական, հումորային կամ մշակութային բնույթ ունի, բացառությամբ այն դեպքերի, երբ այն կարող է օգտագործվել ապատեղեկատվության նպատակով։

Հոդված 3. Օրենքի 57-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 30.1 հոդվածով՝

30.1 Սույն օրենքի 9?1 հոդվածի պահանջները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝

Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։